Դիմումների ընդունում

Երևանում կայանալիք «Միջազգային աշնանային դպրոց-2026»

Վիճարկվող տարածքներ, մասնատված կարգեր. միջազգային իրավունքը և քաղաքականությունը Հարավային Կովկասում

2026 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 10

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Ռեգենսբուրգի Լայբնիցի անվան Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի հետազոտությունների ինստիտուտի (IOS) համագործակցության շրջանակում Երևանում կանցկացվի «Միջազգային աշնանային դպրոց–2026»-ը:

Աշնանային դպրոցն անցկացվում է Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) աջակցությամբ իրականացվող «Վիճարկվող տարածքներ, մասնատված կարգեր. միջազգային իրավունքը և քաղաքականությունը Հարավային Կովկասում» նախագծի շրջանակում: Նախագիծը «Արևելք-Արևմուտք երկխոսություն» ծրագրի մաս է կազմում, որը ֆինանսավորվում է Գերմանիայի արտաքին գործերի դաշնային նախարարության կողմից:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վայրը՝ Երևանի պետական համալսարան, Հայաստան
Թիրախային խումբ՝ ուսանողներ Հայաստանից և Գերմանիայից
Դասավանդման լեզուն՝ անգլերեն
Մասնակցության վճար՝ չի նախատեսվում
Ֆինանսավորումը՝ DAAD-ի «Արևելք-Արևմուտք երկխոսություն» ծրագիր
Դիմումների վերջնաժամկետը՝ հուլիսի 31, 2026 թ.

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծրագիրը Հայաստանի և Գերմանիայի ուսանողների համար ստեղծում է միջգիտակարգային ինտենսիվ կրթական միջավայր՝ ուսումնասիրելու, թե ինչպես են միջազգային իրավունքն ու միջազգային քաղաքականությունը գործում հակամարտությունների, վիճարկվող ինքնիշխանության, ավտորիտար կառավարման և քաղաքական վերափոխումների համատեքստում: Համախմբելով Հայաստանից մինչև 12 և Գերմանիայից մինչև 10 ուսանողի՝ աշնանային դպրոցը խթանում է միջազգային ակադեմիական փոխանակումը և համագործակցային ուսումնառությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում Հարավային Կովկասին՝ որպես իրավական, քաղաքական և աշխարհաքաղաքական հակադրությունների համադրման տարածաշրջանի:

Աշնանային դպրոցը մեկտեղում է միջազգային իրավունքի, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային ուսումնասիրությունների դիտանկյունները: Հիմնական թեմաներն են՝

- միջազգային իրավունքը հակամարտային և հետհակամարտային իրավիճակներում,
- վիճարկվող ինքնիշխանությունը և տարածքային վեճերը,
- վեճերի լուծումը և միջազգային դատական ընթացակարգերը,
- միջազգային դատարանները և արբիտրաժը,
- ներպետական և միջազգային իրավունքի փոխառնչությունները,
- ավտորիտար իրավական ռազմավարությունները և իրավական պատերազմ,
- հիբրիդային հակամարտությունները և աշխարհաքաղաքական մրցակցությունը,
- մարդու իրավունքները, հաշվետվողականությունը և անցումային արդարադատությունը,
- իրավական և քաղաքական զարգացումները Հայաստանում և Հարավային Կովկասում:

Տասնօրյա ծրագիրը ներառում է դասավանդման և ուսումնառության տարբեր ձևաչափեր, այդ թվում՝

- փորձագիտական դասախոսություններ և թեմատիկ սեմինարներ,

- ինտերակտիվ աշխատարաններ և խմբային քննարկումներ,
- սիմուլյացիոն վարժություններ և դեպքերի ուսումնասիրություն,
- ուսանողական զեկուցումներ և համատեղ նախագծային աշխատանք,
- ճանաչողական այցեր և հանդիպումներ ոլորտի գործող մասնագետների, հետազոտողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Ծրագիրը հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան մասնակցության հավաստագիր: Մասնակցությունն անվճար է:

Հայաստանից մասնակցող ուսանողների համար ծրագրի ընթացքում տրամադրվող սննդի, ինչպես նաև ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումների ծախսերը կհոգան կազմակերպիչները:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դիմորդները պետք է լինեն Հայաստանի ճանաչված բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի բարձր կուրսերի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի ուսանողներ և ունենան համապատասխան ակադեմիական պատրաստվածություն հետևյալ ոլորտներից մեկում կամ մի քանիսում՝

- իրավագիտություն կամ միջազգային իրավունք,
- միջազգային հարաբերություններ,
- քաղաքագիտություն,
- սոցիոլոգիա,
- մարդաբանություն,
- պատմություն:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Դիմորդները պետք է անգլերենով ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- ինքնակենսագրական (CV)՝ առավելագույնը 2 էջ՝ ներառյալ լեզուների իմացության մակարդակը,
- մոտիվացիոն նամակ՝ առավելագույնը 2 էջ,
- ակադեմիական տեղեկագիր և լեզվի իմացությունը հավաստող վկայական:

Մոտիվացիոն նամակ

Մոտիվացիոն նամակում դիմորդները պետք է անդրադառնան հետևյալ հարցերին՝

- իրենց հետաքրքրությունը Հարավային Կովկասում միջազգային իրավունքի և քաղաքականության նկատմամբ, ինչպես նաև այդ թեմայի կապը իրենց ընթացիկ ուսումնառության կամ հետազոտության հետ,
- ինչպե՞ս կարող է աշնանային դպրոցին մասնակցությունը նպաստել իրենց ակադեմիական, մասնագիտական զարգացմանը և անձնային աճին,

- աշնանային դպրոցի ո՞ր ուղղությունները, թեմաները կամ հարցերն են իրենց համար առանձնակի հետաքրքրություն ներկայացնում,
- ինչպե՞ս են ծրագրի թեմաները առնչվում Հայաստանի զարգացումներին կամ փորձին,
- ի՞նչ դիտանկյուններ, փորձառություն կամ հմտություններ կարող են իրենք բերել խմբային աշխատանքին,
- ի՞նչ են ակնկալում ստանալ ակադեմիական և մշակութային տարբեր միջավայրերից եկող ուսանողների մասնակցությամբ միջազգային և միջգիտակարգային ծրագրից:

Դիմումների ներկայացման կարգը

Դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել մեկ միասնական PDF ֆայլով՝ ուղարկելով այն daad26@ios-regensburg.de էլեկտրոնային հասցեին:

Դիմումի էլեկտրոնային նամակի թեմայի դաշտում խնդրում ենք նշել՝ **Application – International Autumn School 2026, Yerevan (Armenia Group)**:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը **ս.թ. հուլիսի 31-ն է:**

Աշնանային դպրոցին մասնակցելու համար կընտրվի Հայաստանից մինչև 12 ուսանող, որոնք կմիանան Գերմանիայից մինչև 10 ուսանողից կազմված խմբին: Դիմումների արդյունքների մասին կտեղեկացվեն միայն ընտրված թեկնածուները:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ չընտրված դիմորդների ներկայացրած փաստաթղթերը և անձնական տվյալները դիմումի ներկայացումից վեց ամիս անց ինքնաբերաբար կջնջվեն:

Հարցերի դեպքում դիմել՝

Եղիշե Կիրակոսյան, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետ, էլեկտրոնային հասցե՝ ica@ysu.am,

Սինդի Վիտկե-Հոլֆելդ, Ռեգենսբուրգի Լայբնիցի անվան Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի հետազոտությունների ինստիտուտի (IOS) քաղաքականության բաժնի ղեկավար, էլեկտրոնային հասցե՝ daad26@ios-regensburg.de: